

Այսօր մենք թևակոխել ենք քվանտային տեխնոլոգիաների դար, երբ քվանտային մեխանիկական որպես գիտություն ձեռք է բերել շատ կարևոր կիրառական նշանակություն, ինչը մի քանի տասնամյակ առաջ նույնիսկ դժվար էր պատկերացնել:

🔍 Հաշվի առնելով արդի միջազգային գիտակրթական զարգացումները՝ «Իմ Բայլը» հիմնադրամը կիրականացնի «Քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկայի» մեկուկեսամյա մագիստրոսական կրթական ծրագիր, որի արդյունքում շրջանավարտին շնորհվելու է մագիստրոսի կրթական աստիճան և դիպլոմ: Ուսուցումը լինելու է առկա, վերջինիս շրջանակներում մեծամասամբ դասավանդելու են արտերկրի առաջատար բուհերից հրավիրված բարձրակարգ հայազգի դասախոսներ:

🔍 Ծրագրի ավարտին ակնկալվում է քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկայի բնագավառում առաջատար գիտելիքներով օժտված մասնագետների առկայություն, որոնք կինտեգրվեն միջազգային գիտական համայնքում և գիտական խմբերում, պետության անվտանգային համակարգի համար կդառնան բարձրորակ մասնագետներ, ստարտափ ընկերությունների միջոցով կձևավորեն գիտատեխնոլոգիական էկոհամակարգ՝ դրանով իսկ Հայաստանը վերածելով տարածաշրջանային գիտակրթական կենտրոնի:

📅 Մագիստրոսական կրթական ծրագրի ընդունելության քննությունները նախատեսվում է իրականացնել 2022 թ. -ի օգոստոս ամսին:

🏠 Յուրաքանչյուր մագիստրոս ուսման ընթացքում կունենա իր գիտական ղեկավարը, որի հետ կիրականացնի գիտահետազոտական աշխատանք՝ նախապատրաստելով մագիստրոսական ատենախոսությունը, որը հետագայում կտպագրվի գիտական հոդվածի տեսքով:

📌 «Իմ քայլը» հիմնադրամը «**Quanta**» ծրագիրը կյանքի կոչելու համար ներդնում է շուրջ 400 հազար ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ հնարավորություն տալով հայաստանցի ուսանողին ունկնդրել ոլորտի առաջադեմ մասնագետներին իր երկրում:

📌 Մագիստրոսական կրթական ծրագրի շրջանակներում կարող են ուսումնառել ընդամենը **15** ուսանող, որոնց ուսման ամբողջ վարձավճարը փոխհատուցվելու է «Իմ քայլը» հիմնադրամի կողմից՝ կրթաթոշակի տեսքով:

📌 Նշենք, որ ծրագրին կարող են մասնակցել ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի, ճարտարագիտության, ինֆորմատիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառներում առնվազն բակալավրի որակավորում ունեցող կամ 3-րդ կուրսը ավարտած երիտասարդները:

📌 «**Quanta**» մագիստրոսական կրթական ծրագրի նորություններին ծանոթանալու համար հետևեք՝

«Իմ քայլը» հիմնադրամի պաշտոնական կայքէջին՝ <https://bit.ly/3tz6zhJ>

## ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ

«**Quanta**» քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկայի մագիստրոսական կրթական ծրագիրն ազդարարում է նաև ամառային դպրոցի մեկնարկի մասին, այն անցկացվելու է հուլիսի **1-10-ը**՝ Դիլիջանի GreenWood հյուրանոցում:

Հուլիսի **1-10** իրականացվող Ամառային դպրոցի նպատակն է՝ վեր հանել մագիստրոսական կրթական ծրագրի հնարավոր ուսանողներին, նրանց զինել գիտելիքներով և նախապատրաստել սեպտեմբերին մեկնարկելիք մագիստրոսական կրթական ծրագրին:

Ամառային դպրոցի ընթացքում դասավանդումը կազմակերպվելու է հետևյալ թեմաներով՝

- ◆ Բարձրագույն մաթեմատիկայի հատուկ հարցեր,
- ◆ Քվանտային ֆիզիկայի հիմունքներ,
- ◆ Էլեկտրոդինամիկայի հիմունքներ,
- ◆ Մաթեմատիկական մոդելավորում

! Մասնակցության պայմաններն են՝

- ◆ Լինել ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի, ճարտարագիտության, ինֆորմատիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառներում սովորող կամ ավարտած ուսանող,

- ◆ Ունենալ առնվազն բակալավրի որակավորում կամ ավարտած լինել 3-րդ կուրսը,
  - ◆ Հայտերի ընդունման ժամանակ առավելությունը տրվելու է արդեն իսկ բակալավրի կրթական աստիճան ունեցող շրջանավարտներին,
  - ◆ Տեղերը սահմանափակ են՝ մինչև 30 մասնակից,
  - ◆ Մասնակցությունն անվճար է:
- 👉 Գրանցվել՝ <https://bit.ly/3HqRVP6>
- 🕒 Գրանցման վերջնաժամկետը՝ հունիսի 28, ժամը 18:00
- 📍 «Quanta» մագիստրոսական կրթական ծրագրի նորություններին ծանոթանալու համար հետևեք՝
- Ֆեյսբուքյան էջին՝ <https://bit.ly/3tD8cLc>
  - «Իմ քայլը» հիմնադրամի պաշտոնական կայքէջին՝ <https://bit.ly/3tz6zhJ>
- ✉ Հավելյալ հարցերի դեպքում՝ quantumphysics@mystep.foundation
- ☎ Հեռ.՝ +374 44 44 01 74